ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

**«20» Հունվար 2025թ.** **ք. Երևան**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 5

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը՝

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության հարցազրույցի փուլի գնահատման հարցաթերթը՝ համաձայն Հավելվածի:

**ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Կարեն Թումանյան (Նախագահ)**

**Էդգար Արսենյան**

**Աիարոն Ներսիսյան**

**Դանիել Իոաննիսյան**

**Անի Չատինյան**

**Եփրեմ Կարապետյան (Քարտուղար)**

*Հավելված*
*Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի*
*թեկնածուների ընտրության*
*մրցութային խորհրդի*
*2025 թվականի հունվարի 20-ի*
*թիվ 5 որոշման*

## ՀԱՐՑԱԹԵՐԹ

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ

## ԳՆԱՀԱՏՄԱՆ

______________________________

*(թեկնածուի անուն, ազգանուն)*

| հ/հ | Գնահատման ենթակա չափանիշներ | Գնահատման ենթակա չափանիշները բացահայտող ենթաչափանիշներ | Գնահատման առավելագույն միավոր | Թեկնածուի գնահատման միավոր | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Անձնական որակներ** | | | | |
| 1.1. | Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը | հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածություն | 6 | | |
| | | վերաբերմունքը կոռուպցիայի, դրա դրսևորումների ու հանրային վտանգավորության նկատմամբ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | սեփական սխալներն ու թերությունններն ընդունելու և դրանց մասին բարձրաձայնելու ունակություն | | |
| | | հետևողականություն | | |
| *1-ին կետի ենթակետերի միավորների հանրագումարը՝* | | | 30 | |
| 2. | **Բարեվարքություն** | | | |
| 2.1. | Գույքային դրության համապատասխանությունն օրինական եկամուտներին | | 5 | |
| 2.2. | Նախկինում քրեական կամ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված չլինելը | | 5 | |
| 2.3. | Շահերի բախման առաջացման ռիսկը և շահերի բախման իրավիճակում ճիշտ գործելու կարողություն | | 5 | |
| 2.4. | Էթիկայի կանոններին տիրապետելը | | 5 | |
| 2.5. | Վերաբերմունքը քրեական ենթամշակույթի ու դրա բաղադրիչների նկատմամբ և անօրինականության մասին ազդարարելու պատրաստակամություն | | 5 | |
| 2.6. | Զբաղեցրած պաշտոնից դուրս պաշտոնեական դիրքը չգործարկելը, հեղինակության և ազդեցության չափավոր կիրառում | | 5 | |
| 2.7. | Քաղաքական չեզոքություն | | 5 | |
| 2.8. | Քաղաքական և այլ ճնշումներին դիմագրավելու կարողությունը ու ցանկություն | | 5 | |
| *2-րդ կետի ենթակետերի միավորների հանրագումարը՝* | | | 40 | |
| 3. | **Մասնագիտական փորձ և հմտություններ** | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.1. | Մասնագիտական փորձառություն | մասնագիտական փորձառության ընդհանուր ժամկետ | 10 | | |
| | | թեկնածուի նախկինում իրականացրած աշխատանքների վերաբերելիությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնին | | | |
| 3.2. | Ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծության և դիրքորոշման ներկայացման շրջանակներում վերաբերելի՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, օրենսդրության, ներպետական նախադեպային իրավունքի իմացություն | | 10 | | |
| 3.3. | Ներկայացված իրավական հարցի վերաբերյալ վերլուծություն կատարելու և դիրքորոշում ներկայացնելու կարողությունների և հանպատրաստից կողմնորոշվելու ունակության դրսևորում | տեղեկատվության արագ ու ճիշտ ընկալում | 10 | | |
| | | ստացված տեղեկատվության զտման արդյունքում անհրաժեշտ տվյալների առանձնացում | | | |
| | | տվյալներ համադրելու, համեմատական վերլուծություններ կատարելու կարողություն | | | |
| | | տեղեկատվությունն օբյեկտիվորեն վերլուծելու ու դրա վերաբերյալ մտքերը հստակ շարադրելու միջոցով կարծիք արտահայտելու կարողություն | | | |
| | | սթրեսակայունություն | | | |
| *3-րդ կետի ենթակետերի միավորների հանրագումարը* | | | 30 | | |
| ***Ընդամենը՝ (բոլոր ենթակետերի միավորների հանրագումարը)*** | | | 100 | | |